Շեմային կամ սահմանային գներ

Ֆերմերային տնտեսության շահութաբերության վերլուծությունը կարող է իրականացվել նաև արտադրանքի գինը համեմատելով արտադրության միավորի ծախսերի հետ: Միավորի ծախսերը (միջին ծախսերը) հաշվարկվում են արտադրության ծախսերը բաժանելով արտադրության քանակի վրա:

Ձև5

Եթե ծախսերը կատարվել են ոչ միայն մեկ արտադրանքի արտադրության, այլև մի քանի զուգակցող արտադրանքների արտադրության համար, ապա վերջիններիս արժեքը պետք է հաշվի առնել արտադրության ծախսերի որոշման մեջ՝ հիմնական արտադրանքի գնի համեմատության համարժեք չափող գործիքամիջոց ունենալու համար համար: Նույն կանոնը կիրառվում է նաև այն դեպքում, երբ ուղղակի վճարումները (ինչպես օրինակ ոչ շուկայական արտադրանքը) ներառված են համախառն արդյունքի մեջ: Այս ճշգրտման պատճառը կարելի է հեշտությամբ բացատրել:

Վերը բերված հաշվարկից պարզ է, որ (զուտ) շահույթը պետք է լինի առնվազն հավասար զրոյի, որպեսզի շահութաբերության սահմանը հասանելի լինի:
Զուտ շահույթի պարզեցված հաշվարկը հետևյալն է՝

Արտադրանքի քանակ x գին՝	60 g. x 11.42 €/g =	685.10€/հա
+ Զուգակցող արտադրանք (ներառյալ ուղղակի վճարումները)		+ 348.00 €/հա
— արտադրության ծախսեր (տես Ձև 2)		- 1,066.41 €/հա
= Զուտ շահույթ		= -33.31 €/հա

Հարցը, որին հիմա պետք է պատասխանել, հետևյալն է՝
- Որքա՞ն բարձր պետք է լինի հիմնական արտադրանքի գինը, որպեսզի զուտ շահույթը հավասար լինի զրոյի: Լուծումը գտնվում է հետևյալ պարզ հավասարումը վերափոխելուց հետո՝

Արտադրանքի քանակ x գին + Զուգակցող արտադրանք - արտադրության ծախսեր =0
Արտադրանքի քանակ x գին + Զուգակցող արտադրանք= արտադրության ծախսեր
Արտադրանքի քանակ x գին = արտադրության ծախսեր - Զուգակցող արտադրանք
Գին = (արտադրության ծախսեր - Զուգակցող արտադրանք)/ Արտադրանքի քանակ

39

Հաշվարկված շեմային գների համեմատությունը արդյունք է սննդային և կերային ցորենի գների համեմատության՝ ըստ դրանց արտադրության: 11.42 €/g

(Զուտ) շահույթի հաշվարկի նման, քայլ առ քայլ կարգը թույլ է տալիս այստեղ ևս խորը տնտեսական վերլուծություն կատարել:

Շահութաբերության շեմ (նվազագույն երկարաժամկետ գին, սահմանային գին)

Արտադրանքի մեկ միավորի հաշվով արտադրության բոլոր ծախսերի (երկարաժամկետ ընդամենը ծախսեր) հաշվարկից կարելի է ստանալ նվազագույն երկարաժամկետ սահմանային գինը: Եթե ապրանքի գինը հավասար է նվազագույն երկարաժամկետ սահմանային գնին, ապա զուտ շահույթը զրոյական է (և բոլոր գործոններն ունեն համարժեք հատույց) => շահութաբերության շեմ!

Հաշվարկի օրինակում արտադրության ընդհանուր ծախսերը ծածկելու համար անհրաժեշտ նվազագույն երկարաժամկետ գինը որոշվում է հետևյալ կերպ՝

Արտադրության ընդհանուր ծախսեր (տես Ձև 2)	1,066.41 €/հա
— Զուգակցող արտադրանքի արժեք (ներառյալ ուղղակի վճարումները)	348.00 €/հա
= Հիմնական արտադրանքի համամասնական արտադրական ծախսեր	718.41 €/հա
/ Արտադրության քանակ (հիմնական արտադրանքի)	60.00 g/հա

19
23
28

= Հիմնական արտադրանքի շեմային գին 11.97 €/g

<u>Արտադրության շեմ</u> <u>(նվազագույն կարճաժամկետ գին)</u>

Եթե հաշվարկի ժամանակ հաշվի են առնվում միայն փոփոխական ծախսերը, ապա արդյունքը կոչվում է նվազագույն կարճաժամկետ գին: Այն ցույց է տալիս, որ արտադրությունը կարելի է շարունակել տնտեսական տեսանկյունից ողջամիտ կերպով՝ առկա հաստատուն հզորություններով (=> արտադրության շեմ!):

39 Նվազագույն կարճաժամկետ գինը կարելի է հաշվարկել փոփոխական ծախսերը քայլ առ քայլ ավելացնելով:

Փոփոխական ծախսեր (ապրանքներ և ծառայություններ՝ սահմանային շահույթի հաշվարկից)
— Զուգակցող արտադրանքի արժեք (ներառյալ ուղղակի վճարումները)
+ Հիմնական միջոցների ներդրման ծախսեր => Արտադրության շեմ I 2.63 €/g

+ Ներդրված աշխատուժի ծախսեր (արտադրող աշխատանք) => Արտադրության շեմ II 4.13 €/g
+ Այլ այլընտրանքային ծախսեր (հող, իրավունքներ) => Արտադրության շեմ III 8.05 €/g

<u>Շահույթի շեմ</u>

Եթե օգտագործված գործոնների այլընտրանքային ծախսերը հաշվի չեն առնվում հաշվարկում (ինչպես օրինակ շահույթի հաշվարկում), արդյունքային ցուցանիշը կոչվում է շեմային գին, որի դեպքում շահույթը հավասար է զրոյի:

19 Հաշվարկի օրինակում նվազագույն երկարաժամկետ սահմանային գինը, Շահույթին (շահույթի շեմին) հասնելու համար՝ 7.22 €/g

23 **<u>Հողի համար ուղղակի վճարումների ազդեցությունը</u>**
Շեմային գնի հաշվարկը ցույց է տալիս ոչ միայն մաքուր ծախսերի հաշվարկը, այլև հողի համար ուղղակի վճարումների ազդեցությունը, ինչը իջեցնում է արտադրության ծախսերը՝

28 348 € / ha / 60 g/ ha = 5.80 € / g

Առանց հողի անմիջական վճարման, գնի նվազագույն սահմանը այս չափով ավելի բարձր կլիներ, քան հաշվարկված ցուցանիշը, որը հաշվի է առնում հողի ուղղակի վճարները:

Եթե առկա է անվճար աշխատուժ և հողային հզորություն (բացառությամբ այլընտրանքայինները), ցորենի գինն ավելի բարձր է, քան արտադրության շեմը (I), նույնիսկ առանց հաշվի առնելու ուղղակի վճարումները (I) և ներկայացնում է առավել շահութաբեր տարբերակը
=> Արտադրության շեմ I 8,43 € / g:

Սա վերաբերում է նաև այն դեպքին, եթե կան աշխատուժի այլընտրանքային ծախսեր (առանց աշխատավարձի**)՝ => Արտադրության շեմ II 9.93 € / g:**

Եթե կան նաև հողի այլընտրանքային ծախսեր (կամ եթե վարձավճարները պետք է վճարվեն), ապա արտադրության ծախսերը՝ առանց ուղղակի վճարումները հաշվի առնելու, ավելի բարձր են, քան գինը՝ **=> Արտադրության շեմ III 13.85 € /g:**